## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

*Լերմոնտովո համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 04-ի նիստի.*

գ. Լերմոնտովո Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

**Մասնակցում էին՝**

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Իվան Բոլոտինը, Քրիստինե Խառատյանը, Անդրեյ Կորոլյովը, Վասիլի Կորոլյովը; համայնքապետարանի աշխատակիցները:

**ՆԻՍՏԸ** - Էդիկ Չախալյանը ժամը 11:30-ին նիստը հայտարարեց բացված:

**Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:**

**Կողմ՝ 5, դեմ՝ 0 ընդունվեց որոշում**:

**Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.**

**Հաստատված օրակարգը՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 2022թ-ի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Մ.Բոլոտինա

2. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկված ավագանու անդամների մասին

զեկ. Ա.Հարությունյան

**ԸՆԹԱՑՔԸ՝**

**1. <u>ԼՍԵՑԻՆ</u> -** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 2022թ-ի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը.

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը ներկայացրեց բյուջեի փոփոխության անհրաժեշտությունը: Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում:**

**2. <u>ԼՍԵՑԻՆ</u>** Լերմոնտովո համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին որոշման նախագիծը

- զեկուցեց աշխատակազմի քարտուղար Անահիտ Հարությունյանը

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում որոշեցին նշված հանձնաժողովների կազմը:

Նիստ վարողը առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

1.ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

2.ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

3.ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

4.ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

5.ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ